

# ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

## ԽԱՉԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Զի բան խաչին կորուսելոցն յիմարութիւն է, այլ փրկելոցս մեզ՝ զօրութիւն Աստուծոյ: Զի գրեալ է, Կորուսից զիմաստութիւն իմաստնոց, և զխորհուրդս խորհրդականաց արհամարհեցից: Ո՞ւր իմաստուն, ո՞ւր դպիր, ո՞ւր քննիչ աշխարհիս այսորիկ, ո՞չ ապաքէն յիմարեցոյց Աստուած զիմաստութիւն աշխարհիս այսորիկ: Քանզի իմաստութեամբն Աստուծոյ ոչ ծանեաւ աշխարհ իմաստութեամբն զԱստուած, հաճեցաւ Աստուած յիմարութեամբ քարոզութեանն ապրեցուցանել զհաւատացեալս:

Իսկ որովհետև հրեայք նշան հայցեն, և հեթանոսք իմաստութիւն խնդրեն, Մեք քարոզեսցուք զխաչելեալն Քրիստոս, հրէից գայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն: Բայց նոցին իսկ կոչեցելոցն հրէից և հեթանոսաց, զՔրիստոս Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւն: Զի յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան զմարդիկ, և տկարն Աստուծոյ զօրագոյն է քան զմարդիկ (Ա ԿՈՐՆԹ., Ա 18—25):

Եւ որ ոչ առնու զխաչ իւր և գայ զկնի իմ՝ չէ ինձ արժանի (ՄԱՏԹ., Ժ 38):

Եթէ ոք կամի զկնի իմ գալ՝ ուրացցի զանձն և առցէ զխաչ իւր և եկեսցէ զկնի իմ (ՄԱՏԹ., ԺԶ 24):

Զի թէպէտ և խաչեցաւ ի մերմէ տկարութենէ, այլ կենդանի է զօրութեամբն Աստուծոյ (Բ ԿՈՐՆԹ., ԺԳ 4):

Խոնարհեցոյց զանձն, լեալ հնազանդ մահու չափ և մահու խաչի (ՓԻԼԻՊ., Բ 8):

Արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ, որ ինչ յերկրի և որ ինչ յերկինս (ԿՈՂՈՍ., Ա 20):

Եւ ջնջեաց զձեռագիր մերոյ հակառակութեանն հրամանօքն իւրովք որ կայր մեզ հակառակ, եբարձ զայն ի միջոյ և բևեռեաց ընդ խաչափայտին» (ԿՈՂՈՍ., Բ 14):

Որ զմեղս մեր իւրով մարմնովն վերացոյց ի խաչափայտն, զի լիցուք զերծեալք ի մեղաց անտի, և կեցեմք արդարութեանն կենակիցք, որոյ վիրօքն բժշկեցայք (Ա ՊԵՏՐ., Բ 24):

